ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

23 սեպտեմբերի չորեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

120
(3329)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՇՈՒՐՋ ԿՐՔԵՐԸ ՉԵՆ ՀԱՆԴԱՐՏՎԵԼ

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ, նախկին պատգամավոր Հայկ Սարգսյանի շուրջ կրքերը ՔՊ-ում դեռ չեն հանդարտվել: Սարգսյանը, հիշեցնենք, հրապարակային քննադատության էր ենթարկել ԱԺ նախկին նախագահ Ալեն Սիմոնյանին՝նրան մեղադրելով խաղատնային բիզնեսին հովանավորելու եւ այդ ոլորտի շահերին սպասարկող օրենսդրական նախաձեռնություններ առաջ տանելու մեջ: Ասել է թե՝համարձակվել է խոսել ներքին խնդիրներից:

«Ժողովուրդ» օրաթերթի ՔՊ-ական աղբյուրների փոխանցմամբ՝ չի բացառվում, որ առաջիկայում Հայկ Սարգսյանի հարցը կուսակցության ներսում վերջնական հանգուցալուծում կստանա: Մեր տեղեկություններով՝ քննարկվում է երկու տարբերակ: Առաջինի դեպքում Սարգսյանը կհրավիրվի ՔՊ վերահսկող հանձնաժողով, որտեղ նրանից պարզաբանումներ կպահանջեն հնչեցրած հայտարարությունների վերաբերյալ, ինչից հետո հանձնաժողովը համապատասխան որոշում կկայացնի կամ առաջարկություն կներկայացնի վերնախավին:

Երկրորդ տարբերակով՝ՔՊ վարչությունը կարող է վերահսկող հանձնաժողովից պահանջել ներկայացնել Հայկ Սարգսյանի վերաբերյալ կուսակցության տրամադրության տակ եղած ամբողջ նյութն ու փաստերը: Դրանք արդեն կքննարկվեն կուսակցության ղեկավար մակարդակում՝ՔՊ վարչությունում, եւ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ կորոշվի՝ Սարգսյանին հեռացնել կուսակցությունից, թե սահմանափակվել հերթական նկատողությամբ:

Ուշագրավ է, որ խնդիրը վաղուց արդեն միայն ներկուսակցական կարգապահության շրջանակում չէ:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Սեպտեմբերի 21-ին Հայաստանը նշում էր անկախության 35-ամյակը: Տոն, որը որեւէ իշխանության, կուսակցության կամ քաղաքական թիմի սեփականությունը չէ եւ չի կարող լինել: Անկախության օրը Հայաստանի Հանրապետության տոնն է՝անկախ նրանից՝ով է տվյալ պահին իշխանության ղեկին: Սակայն պետական մակարդակով կազմակերպված պաշտոնական միջոցառումների պատկերը կրկին այլ բան էր ցույց տալիս: Պետական պաշտոնական միջոցառումներին ինստիտուցիոնալ ընդդիմության ներկայացուցիչները չէին մասնակցում: Հրավեր չէին ստացել նաեւ ՀՀ նախկին նախագահները: Դե երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանն էլ այս պահին կալանքի տակ է: Նախագահական նստավայրում Անկախության օրվա առթիվ կազմակերպված պետական պարգեւների հանձնման պաշտոնական արարողության մասին հաղորդագրությունում մասնակիցների թվում նշված են վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ԱԺ նախագահ Ռուբեն Ռուբինյանը, բարձրաստիճան այլ պաշտոնյաներ եւ Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ: Այս պատկերը հատկապես ուշագրավ է այն պատճառով, որ խոսքը ոչ թե ՔՊ-ի տարեդարձի, կուսակցական համագումարի կամ նախընտրական միջոցառման, այլ Հայաստանի Հանրապետության անկախության օրվա մասին է:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

Մեղրիի առաջիկա ավագանու ընտրություններում «Քաղաքացիական պայմանագրի» ցուցակը գլխավորելու է 41-ամյա գործարար Սերգո Գալստյանը: Ուշագրավ է, որ Գալստյանը ՔՊ-ի անդամ է դարձել ընտրություններից ընդամենը օրեր առաջ: Այս մասին հրապարակվել է նաեւ «Առավոտ»-ում, որտեղ Գալստյանի՝ՔՊ ցուցակը գլխավորելու մասին տեղեկությունը դեռ սեպտեմբերի 11-ին էր շրջանառվում: Սակայն Գալստյանի քաղաքական ճանապարհի այս կտրուկ շրջադարձը Մեղրիում մի շարք հարցեր է առաջացնում: «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրների փոխանցմամբ՝ 2026 թվականի հունիսի 7-ի խորհրդարանական ընտրություններին նախորդած քարոզարշավի ընթացքում, երբ Մեղրի էր այցելել ՀՀ երկրորդ նախագահ, «Հայաստան» դաշինքի առաջնորդ Ռոբերտ Քոչարյանը, Գալստյանը եղել է նրա հանդիպմանն ակտիվ մասնակից: «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրների փոխանցմամբ՝նա ներկա է եղել նաեւ Քոչարյանի փակ հանդիպմանը եւ այդ շրջանում իրեն ավելի մոտ է պահել ընդդիմադիր դաշտին: Սակայն հունիսյան ընտրություններից հետո պատկերը կտրուկ փոխվել է: Սերգո Գալստյանը հայտնվել է ՔՊ-ի շարքում, դարձել կուսակցության անդամ, իսկ այժմ արդեն գլխավորում է իշխող կուսակցության ցուցակը:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

«Ժողովուրդ» օրաթերթին տեղեկություններ հասան այն մասին, որ ԲԴԽ ներկայիս նախագահ Արթուր Աթաբեկյանը ազատվում է Կարեն Անդրեասյանի ղեկավարման ժամանակ քաղաքացիական եւ վարչական դատարանների դատավորների ցուցակում հայտնված թեկնածուներից: Բանն այն է, որ դատական համակարգում ակտիվ քննարկվում է այն հանգամանքը, որ դատավորների ցուցակում հայտնվել են անձինք, որոնք, մեղմ ասած, չեն համապատասխանում դատավորի չափանիշներին եւ ինչ-ինչ պայմանավորվածության արդյունքում հայտնվել են ցուցակում: Օրինակ՝ Բարձրագույն դատական խորհրդի 2026թ. սեպտեմբերի 14-ի թիվ ԲԴԽ-81-Ո-82 որոշման համաձայն՝Բարձրագույն դատական խորհուրդը որոշել է՝դատավորների թեկնածուների ցուցակի վարչական մասնագիտացման բաժնի թեկնածու Հայրապետ Կարապետյանին Վարչական դատարանի դատավորի պաշտոնի թափուր տեղում Հանրապետության նախագահի նշանակմանը ներկայացնելու նպատակով առաջարկություն չներկայացնել, Նարինե Առաքելյանին հանել դատավորների թեկնածուների ցուցակի վարչական մասնագիտացման բաժնից, դատավորների թեկնածուների ցուցակի վարչական մասնագիտացման բաժնի թեկնածու Նարինե Առաքելյանին Վարչական դատարանի դատավորի պաշտոնի թափուր տեղում Հանրապետության նախագահի նշանակմանը ներկայացնելու նպատակով առաջարկություն չներկայացնել: Սա չնայած այն բանին, որ Կարեն Անդրեասյանը միջազգային հարցերով ՀՀ Կառավարության ներկայացուցիչն է:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ԴԺՎԱՐ ԵՎ ԱՆՀԱՍԿԱՆԱԼԻ ՕՐԵՐ ԵՆՔ ԱՊՐՈՒՄ»

ՀՀ անկախության 35-րդ տարեդարձին ArmLur.am-ի նկարահանող խումբը Եռաբլուր զինվորական դանթեոնում էր: ArmLur.am-ը զրուցեց Արցախյան դատերազմի վավերագրող Սամվել Թադեւոսյանի հետ:



- Պարոն Թադեւոսյան, այսօր Հայաստանի անկախության 35-ամյակն է: Դուք Արցախյան պատերազմի վավերագրողն եք եղել: Կխնդրեմ Ձեր հուշերով կիսվեք: Արցախյան շարժումն, ինչպես գիտենք, հիմք հանդիսացավ Հայաստանի անկախության ճանապարհի համար: Ինչպե՞ս եք հիշում այդ տարիներն ու անկախության ձեռքբերումը:

- Մեզ համար սա արտառոց օր է: Շատ երկար էինք սպասում, որ Հայաստանը պիտի անկախանա, ազատվի նաեւ բոլշեւիկյան լծից: Եւ դա կայացավ 35 տարի առաջ՝ մեր համախմբված պայքարի արդյունքում, Արցախյան պատերազմի հաղթանակների արդյունքում եւ այն բյուրավոր հերոսների շնորհիվ, որոնք հողը գրկեցին՝ սրբացնելով այդ հողը, եւ իրենք էլ սրբացան: Իհարկե, Անկախության տոնը բոլորիս համար շատ նվիրական տոն է: Մեր պատմությունը լի է զրկանքներով, ցեղասպանություններով, կոտորածներով, սակայն մենք անընդհատ վերածնվել ենք: Նույնիսկ 1915 թվականի ցեղասպանությունից ընդամենը երեք տարի անց մենք հանրապետություն հռչակեցինք: Այսօր ուզում եմ հատկապես շնորհավորել որդեկորույս մայրերին: Նրանց որդիները սրբադասվեցին, եւ նրանց որդիները կերտեցին մեր նորօրյա հաղթանակների ճանապարհը, բացեցին այդ ճանապարհը:

- Դուք հիշեցիք մեր պատմության ծանր էջերը: Այսօր, սակայն, անկախության տոնը նշում ենք նաեւ բավական բարդ ժամանակներում: Ինչպե՞ս եք գնահատում այսօրվա իրավիճակը:

- Մենք, դժբախտաբար, դժվար եւ անհասկանալի օրեր ենք ապրում: Տարբեր գաղտնի եւ արդեն լեգալ եղանակներով փորձում են մեզ զսպաշապիկ հագցնել, մեր հողերը անջատել եւ տալ մեր դարավոր թշնամուն: Բայց նրանք, իմ համոզմամբ, դատապարտված են, որովհետեւ չգիտեն հայ ոգու ուժը եւ չգիտեն, թե մեր ժողովրդի մեջ դեռ ինչ պոտենցիալ կա: Ես լիահույս եմ, բացարձակ լիահույս եմ, որ լավ օրեր են գալու: Մենք վերադառնալու ենք մեր ազգային արժեքների գնահատմանը: Այսօր Եռաբլուրում էլ դա տեսանելի է: Օրը դեռ նոր է բացվել, բայց այստեղ արդեն բազմահոս բազմություն կա: Մարդիկ գալիս են իրենց տուրքը տալու հերոսներին: Ես նույնիսկ նկատեցի, որ երիտասարդներ, պատանի մարզիկներ են եկել՝ իրենց շնորհակալությունը հայտնելու այն մարդկանց, ովքեր իրենց կյանքը տվեցին հայրենիքի համար:

- Իսկ ինչպե՞ս եք հիշում 1991 թվականի անկախության հանրաքվեն: Մարդիկ ի՞նչ տրամադրությամբ էին մասնակցում, ինչպիսի՞ մթնոլորտ էր տիրում:

- Մեծ տոնախմբություններ էին: Ես նաեւ նկարել եմ այդ ամենը: Հիշում եմ՝ այն մարդկանց, ովքեր շարժման ակունքներում կանգնած էին եւ ղեկավարում էին այդ շարժումը:

Հիշում եմ նաեւ մի ռեժիսոր ընկերոջս՝ Շահրամ Սամվելի որդուն: Նա մի գործողություն արեց՝ եռագույն դրոշը բարձրացրեց կառավարության շենքի վրա: Այդ պահին երեք-չորս օպերատորներով այնտեղ էինք: Միաժամանակ եւ նկարում էինք, եւ արտասվում: Աչքերս լցվել էին արցունքներով, որովհետեւ մենք դեռ երկար տարիներ խոսում էինք անկախության, ազատության, ինքնիշխան լինելու մասին: Եւ ահա այդ օրը դա իրականություն դարձավ: Դրանք փառավոր օրեր էին: Ամբողջ Երեւանի փողոցներում տարբեր տոնախմբություններ էին, նույնիսկ բացօթյա ճաշկերույթներ: Այդ օրերն իսկապես նախանձելի օրեր էին: Հայ ժողովուրդը կարծես բռունցք էր դարձել: Բոլորի դեմքերին բավարարվածություն եւ ուրախություն կար: Ես հույս ունեմ, որ այդ տոնը հավերժ մեզ հետ է լինելու եւ երբեք չի լքելու մեզ:

- Դուք այդ տարիների իրադարձությունների ոչ միայն ականատեսն եք եղել, այլեւ Ձեր ֆիլմերով պահպանել եք այդ պատմությունը: Ինչպե՞ս եք այսօր շարունակում փոխանցել այդ հիշողությունը:

- 1991 թվականի սերնդի տղերքը շարքերում են: Ես միշտ ասում եմ՝ տղերքը շարքերում են: Ես իմ ֆիլմերով փորձում եմ փոխանցել այդ պատմությունը: Մինչեւ այսօր 62 ֆիլմ եմ արել՝ Արցախյան շարքը, «Խոնարհ հերոսներ», «Չկրակված փամփուշտ» եւ այլ աշխատանքներ: Եվ շարունակում եմ աշխատել: Ծուտով եւս մեկ ֆիլմի պրեմիերա կունենամ: Իմ աշխատանքով փորձում եմ պահպանել այն հիշողությունը, որը չպետք է կորի:

- Դուք խոսեցիք նաեւ հայրենասիրության մասին: Ձեր պատկերացմամբ՝ ի՞նչ է հայրենասիրությունը, եւ ինչպիսի՞ դեր պետք է այն ունենա մեր հասարակության մեջ:

- Հայրենասիրությունը վտանգավոր բառ չէ, այն պարտադիր պայման պետք է լինի: Երբ ասում են՝ «այս մարդը հայրենասեր է», ես երբեմն ասում եմ՝ եթե մարդը սիրում է իր զավակին, գնում է աշխատանքի, որպեսզի ընտանիքի համար հաց, ուտելիք բերի, դա հայրենասիրություն չէ, դա պարտավորություն է:

Մեր բարոյական կոդեքսում հայրենասիրությունը պիտի լինի պարտադիր պայման: Այն մարդը, որը գնում է դեպի դավաճանություն, պիտի հասկանա, որ դա պարզապես անձնական ընտրություն չէ. դա հարված է մեր արժեքներին:

Խնդիրը, իմ կարծիքով, նաեւ դաստիարակության մեջ է: Երբ մարդուն փորձում են պարտադրել ուրանալ իր ազգային արժեքները, դա արդեն շատ լուրջ խնդիր է:

- Ի՞նչ նկատի ունեք ազգային արժեքներ ասելով:

- Նույնիսկ ցեղասպանության ուրացումը: Գառնիի տաճարին ասել՝ «հռոմեական հավաբուն». դա ի՞նչ է նշանակում: Դա նշանակում է՝ սեփական պատմական արժեքը նսեմացնել: Մասիսը համարել ավելորդ բան, ցեղասպանությունը համարել ոչ կարեւոր կամ երկրորդական խնդիր:

Սա նշանակում է՝ հրաժարվել կոնկրետ ազգային արժեքներից: Իսկ մարդն ի՞նչ է, եթե նա հրաժարվում է իր հիշողությունից, իր պատմությունից եւ իր արժեքներից:

Մենք պետք է պահպանենք մեր ազգային հիշողությունը, որովհետեւ առանց դրա ժողովուրդը կորցնում է իր ինքնությունը:

- Ի՞նչ կցանկանայիք ասել անկախության 35-ամյակի առիթով մեր ժողովրդին:

- Կցանկանայի ասել, որ չկորցնենք հավատը: Մենք շատ ծանր ճանապարհ ենք անցել, բայց միշտ կարողացել ենք վերածնվել: Մեր ժողովուրդը շատ բան է տեսել, բայց երբեք չի դադարել պայքարել իր ապրելու իրավունքի համար:

Մենք արեւորդիներ ենք: Արեւը մեր գերագույն պաշտամունքն է: Եվ այդ արեւի տակ ապրելու իրավունքը մշտապես մեր սրտի մեջ է եղել:

Ոչ ոք չի կարող որեւէ եղանակով՝ կոտորածով, խաբեությամբ կամ լկտիությամբ, մեզ զրկել այդ իրավունքից: Ես հավատում եմ, որ մենք դեռ լավ օրեր ենք ունենալու եւ վերադառնալու ենք մեր ազգային արժեքների գնահատմանը:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ՝ 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԵԼԻՑԻՆ

Այս կիրակի՝ սեպտեմբերի 27-ին, Հայաստանում տեղի կունենան տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ: Քվեարկությունը կանցկացվի Լոռու, Արմավիրի եւ Կոտայքի մարզերի մի շարք համայնքներում:

Մասնավորապես, Լոռու մարզի Թումանյան համայնքում կանցկացվեն ավագանու համամասնական ընտրություններ, իսկ Լերմոնտովո համայնքում ընտրողները կքվեարկեն ինչպես համայնքի ղեկավարի, այնպես էլ ավագանու անդամի ընտրության համար: Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքում եւ Կոտայքի մարզի Արզնի համայնքում կանցկացվեն ավագանու անդամի ընտրություններ:

Այսպիսով, սեպտեմբերի 27-ի ընտրական օրն ընդգրկելու է համայնքային կառավարման տարբեր մակարդակների ընտրություններ՝ համայնքի ղեկավարից մինչեւ ավագանու կազմի ձեւավորում:

Ընտրությունների նշանակման օրն, այդուհանդերձ, ուշագրավ է նաեւ մեկ այլ հանգամանքով. քվեարկությունը նախատեսված է սեպտեմբերի 27-ին՝ 2020 թվականի 44-օրյա պատերազմի մեկնարկի տարելիցի օրը: Այդ օրը Հայաստանում հիշատակի միջոցառումներ են անցկացվում պատերազմի զոհերի հիշատակին:

Միաժամանակ, սեպտեմբերի 27-ի ՏԻՄ ընտրությունները տեղի են ունենում 2026 թվականի հունիսի 7-ի խորհրդարանական ընտրություններից հետո՝ համայնքային մակարդակում քաղաքական ուժերի դիրքերը վերաձեւավորելու գործընթացի պայմաններում:

Հատկանշական է նաեւ Լերմոնտովոյի դեպքը. համայնքում նախատեսված են միաժամանակ համայնքի ղեկավարի եւ ավագանու անդամի ընտրություններ: Համայնքի ընտրական գործընթացների համար առանձին ընտրական հանձնաժողովի տվյալներ եւս հրապարակված են ԿԸՀ համակարգում:

Սեպտեմբերի 27-ի քվեարկությունից հետո ՏԻՄ ընտրությունների հաջորդ փուլերը շարունակվելու են նաեւ այլ մարզերում եւ համայնքներում:

Ս. Գ.

ՈՎՔԵ՞Ր ԵՆ ՄԵԿՆԵԼ ԱՄՆ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ սեպտեմբերի 22-25-ը Հայաստանի կառավարական պատվիրակությունը աշխատանքային այցով մեկնել է Ամերիկայի Միացյալ Նահանգներ՝ Նյու Յորք: Համապատասխան որոշումը ստորագրել է վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Պատվիրակության կազմում ընդգրկված են վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Մելանյա Հարությունյանը, Կարեն Գասպարյանը, Արմեն Խաչատրյանը, Սիրուն Հովսեփյանը, Ալեքսանդր Աբրահամյանը, Արման Շահինյանը, Տիգրան Մեհրաբյանը, Գեւորգ Գալստյանը, Խաչատուր Ադումյանը, Ռոբերտ Աբիսողոմոնյանը, Գագիկ Վանոյանը, Անահիտ Ավանեսյանը, Լենա Նանուշյանը, Համբարձում Մաթեւոսյանը:

Հետաքրքրական է, որ Փաշինյանի գլխավորած պատվիրակության կազմում ԱՄՆ են մեկնել նաեւ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը, նրա կինը՝ Գոհար Աբաջյանը, եւ նախկին ՔՊ պատգամավոր, ԱԺ փոխնախագահ Հակոբ Արշակյանը: Հարց է առաջանում՝ ինչ իրավական կարգավիճակով է նախկին պատգամավորը ներառվել Հայաստանը ներկայացնող պաշտոնական պատվիրակության ցանկում:

Կառավարական պատվիրակության կազմում ընդգրկվել են նաեւ ԱՄՆ-ում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Նարեկ Մկրտչյանը եւ ՄԱԿ-ում Հայաստանի մշտական ներկայացուցիչ Պարույր Հովհաննիսյանը:

Փաշինյանի՝ ԱՄՆ գործուղման ընթացքում վարչապետի պարտականությունները կկատարի փոխվարչապետ Մհեր Գրիգորյանը:

Որոշման համաձայն՝ պատվիրակության անդամների գործուղման հետ կապված ծախսերը կկատարվեն տարբեր գերատեսչությունների եւ կառույցների միջոցների հաշվին: Մասնավորապես, Նիկոլ Փաշինյանի եւ պատվիրակության մի շարք անդամների ճանապարհածախսն ու օրապահիկը, ինչպես նաեւ հուշանվերների ձեռքբերման եւ թարգմանչական ծառայությունների ծախսերը կկատարվեն վարչապետի աշխատակազմի պահպանման ծախսերի համար նախատեսված միջոցներից:

Գիշերավարձի, ներկայացուցչական եւ փոխադրամիջոցների վարձակալության ծախսերը կկատարվեն արտաքին գործերի եւ միջազգային առեւտրի նախարարության պետական արարողակարգի ծառայության միջոցների հաշվին:

Արարատ Միրզոյանի եւ Ռոբերտ Աբիսողոմոնյանի ծախսերը կկատարվեն ԱԳՆ-ի, Գագիկ Վանոյանինը՝ ԱԳՆ պետական արարողակարգի ծառայության, իսկ Անահիտ Ավանեսյանի եւ Լենա Նանուշյանի ծախսերը՝ առողջապահության նախարարության միջոցների հաշվին: Համբարձում Մաթեւոսյանի գործուղման ծախսերը կկատարվեն շրջակա միջավայրի նախարարության միջոցներից:

Միաժամանակ, Գոհար Աբաջյանի գործուղման ծախսերը կկատարվեն «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի միջոցներից, իսկ Հակոբ Արշակյանը գործուղման ծախսերը հոգալու է սեփական միջոցներով:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԻՆՉ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ ԿՈՒՆԵՆԱ ԱՐԳԵԼԱՓԱԿՈՒՄԸ

ԱՄՆ-ը սեպտեմբերի 23-ից նոր սահմանափակումներ է կիրառում իրանական ավիացիոն ոլորտի նկատմամբ, որոնք կարող են լրջորեն սահմանափակել իրանական ավիաընկերությունների միջազգային գործունեությունը: ԱՄՆ ֆինանսների նախարար Սքոթ Բեսենթը հայտարարել է, որ այդ օրվանից «բոլոր իրանական ավիաընկերությունները կփակվեն ամբողջ աշխարհում»՝ զգուշացնելով նաեւ նրանց սպասարկող ընկերություններին:

Սահմանափակումները վերաբերում են ոչ միայն ավիաընկերություններին, այլեւ նրանց սպասարկող ենթակառուցվածքին: Իրանական ինքնաթիռներին վառելիք, վայրէջքի եւ ցամաքային սպասարկման ծառայություններ կամ տոմսերի վաճառքի ծառայություններ տրամադրող ընկերությունները կարող են հայտնվել ԱՄՆ պատժամիջոցների տակ եւ կորցնել դոլարային ֆինանսական համակարգից օգտվելու հնարավորությունը:

ԱՄՆ-ը սեպտեմբերի 8-ին արդեն պատժամիջոցներ էր սահմանել Իրանի բոլոր 27 ավիափոխադրողների նկատմամբ՝ հայտարարելով, որ դրանք օգտագործվում են զենքի, անձնակազմի եւ ապօրինի բեռների տեղափոխման համար:

Իրանի միջազգային հիմնական ավիափոխադրողներն են «Մահան Էյրը», պետական «Իրան Էյրը» եւ «Քեշմ Էյրը»: «Մահան Էյրը» վերջին օրերին դադարեցրել է Ստամբուլ, Անկարա եւ Մուսկատ թռիչքները: «Իրան Էյրի» միջազգային ցանցը եւս զգալիորեն կրճատվել է՝ պատժամիջոցների, ինքնաթիռների պակասի եւ պատերազմի հետեւանքով:

2025 թվականին Իրանում օդային տրանսպորտից օգտվել է 46.2 մլն ուղեւոր, որոնցից 11.2 մլն-ը միջազգային ուղեւորներ են: Նրանց շուրջ 7.2 մլն-ը սպասարկվել է իրանական ավիաընկերությունների կողմից:

Փորձագետների գնահատմամբ՝ նոր սահմանափակումները կարող են բարձրացնել ավիատոմսերի գները եւ դժվարացնել իրանցիների միջազգային տեղաշարժը: Որոշ գնահատականներով՝ իրանական ավիափոխադրումների ծախսերն արդեն զգալիորեն աճել են, իսկ պատժամիջոցները կարող են նաեւ բարդացնել հին ինքնաթիռների սպասարկումն ու պահեստամասերի ձեռքբերումը:

Միաժամանակ ԱՄՆ-ը չի կարող ինքնուրույն փակել այլ երկրների օդային տարածքը իրանական ինքնաթիռների համար, ուստի փորձում է ճնշում գործադրել դրանց սպասարկող օտարերկրյա ընկերությունների վրա:

Չինաստանն արդեն հայտարարել է, որ դեմ է միջազգային իրավական հիմք չունեցող միակողմանի պատժամիջոցներին: Փորձագետների կարծիքով՝ Թուրքիայի, Իրաքի եւ Պակիստանի համար եւս Իրանի հետ օդային կապերը տնտեսական նշանակություն ունեն, ուստի հարց է՝ որքանով նրանք կհետեւեն Վաշինգտոնի պահանջներին:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ

«ԱԼԲԱՆԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ԽՈՒՄԲ Է ՍՏԵՂԾՎԵԼ

Ադրբեջանական պետական լրատվական գործակալությունը հաղորդում է, որ «Արեւմտյան Ադրբեջանի համայնքում» աշխատանքային խումբ է ստեղծվել՝ ներկայիս Հայաստանի տարածքում ալբանական քրիստոնեական ժառանգությունն ուսումնասիրելու նպատակով:



Գանձասարի շուրջ վերջին օրերի զարգացումներից հետո Ադրբեջանի կողմից Հայաստանի պատմամշակութային ժառանգության վերաբերյալ իրականացվող տեղեկատվական արշավը կարծես նոր փուլ է մտնում: Եթե նախկինում Բաքուն իր թեզերը հիմնականում տարածում էր ադրբեջանական պաշտոնական հայտարարությունների եւ լրատվամիջոցների միջոցով, ապա այժմ դրանք ավելի ակտիվորեն ներկայացվում են նաեւ օտարերկրյա դիվանագետներին, իսկ հաջորդիվ արդեն հայտարարվում է Հայաստանի ներկայիս տարածքում «ալբանական ժառանգությունն» ուսումնասիրող աշխատանքային խմբի ստեղծման մասին:

Ադրբեջանական պետական AZERTAC լրատվական գործակալությունը հայտնում է, որ «Արեւմտյան Ադրբեջանի համայնքում» աշխատանքային խումբ է ստեղծվել՝ ներկայիս Հայաստանի տարածքում, այդ թվում՝ Զանգեզուրում եւ Սեւանի լճի ավազանում գտնվող եկեղեցիների, վանքերի, մատուռների ու խաչքարերի պատմությունն ու «պատկանելիությունն» ուսումնասիրելու համար:

Ադրբեջանական կողմը հայտարարում է, որ ուսումնասիրությունները պետք է իրականացվեն արխիվային փաստաթղթերի եւ այլ սկզբնաղբյուրների հիման վրա: Միաժամանակ AZERTAC-ի հրապարակման մեջ ներկայացվում է «Արեւմտյան Ադրբեջանի համայնքի» դիրքորոշումը, ըստ որի՝ Հայաստանի տարածքում գտնվող «Կովկասյան Ալբանիայի» միջնադարյան հուշարձանները դիտարկվում են որպես ադրբեջանական կողմի ժառանգության մաս:

Ուշագրավ է, որ այս հայտարարությունը հնչում է Գանձասարի շուրջ տեղի ունեցած զարգացումներից անմիջապես հետո: Սեպտեմբերին Ադրբեջանում հավատարմագրված օտարերկրյա դիվանագետների այց է կազմակերպվել Գանձասարի եւ Դադիվանքի վանական համալիրներ: Ադրբեջանական կողմը այդ այցի ընթացքում ներկայացրել է իր պատմական մեկնաբանությունը՝ հայկական քրիստոնեական հուշարձանները կապելով Կովկասյան Ալբանիայի ժառանգության հետ:

Առավել ուշագրավ է հենց AZERTAC-ի հրապարակման այն հատվածը, որտեղ «Արեւմտյան Ադրբեջանի համայնքը» ներկայիս Հայաստանի տարածքում գտնվող բազմաշերտ կրոնական եւ մշակութային ժառանգությունը դիտարկում է որպես իր «սեփական ժառանգության» մաս: Ավելին՝ հրապարակման համաձայն՝ այդ ուսումնասիրությունը պետք է ծառայեցնի նաեւ «տեղահանված բնակչության անվտանգ եւ արժանապատիվ վերադարձի» պատմական ու մշակութային հիմքերի փաստաթղթավորմանը:

Այս ձեւակերպումն արդեն դուրս է գալիս զուտ պատմագիտական ուսումնասիրության շրջանակից: Մշակութային ժառանգության ուսումնասիրությունը ադրբեջանական կողմի հրապարակման մեջ ուղղակիորեն կապվում է տեղահանված ադրբեջանցիների վերադարձի օրակարգի հետ, իսկ «Արեւմտյան Ադրբեջան» ձեւակերպմամբ Հայաստանի Հանրապետության տարածքը ներկայացվում է Բաքվի կողմից առաջ մղվող քաղաքական հայեցակարգի շրջանակում:

Այսպիսով, ադրբեջանական պետական լրատվամիջոցը շարունակում է միջազգային տեղեկատվական դաշտում շրջանառել պատմամշակութային ժառանգության վերաբերյալ Բաքվի թեզերը՝ դրանք ներկայացնելով որպես գիտական ուսումնասիրության ենթակա հարց: Սակայն հրապարակման քաղաքական ենթատեքստը դժվար է անտեսել. «Կովկասյան Ալբանիայի ժառանգության» մասին պնդումները զուգակցվում են «Արեւմտյան Ադրբեջան» հայեցակարգի եւ ադրբեջանցիների՝ Հայաստանի տարածք «վերադարձի» օրակարգի հետ:

Հատկապես մտահոգիչ է, որ այս արշավը վերջին օրերին ավելի է ակտիվացել: Գանձասարի եւ Դադիվանքի շուրջ ադրբեջանական կողմի կողմից օտարերկրյա դիվանագետներին ներկայացված միակողմանի մեկնաբանություններից հետո նույն թեզերն արդեն տեղափոխվում են Հայաստանի Հանրապետության տարածքի նկատմամբ ձեւակերպվող օրակարգ: Ադրբեջանական կողմը ոչ միայն շարունակում է շրջանառել այդ պնդումները, այլեւ հայտարարում է դրանք ուսումնասիրելու համար առանձին աշխատանքային խմբի ստեղծման մասին:

Արդյունքում՝ խոսքը միայն հերթական ադրբեջանական հրապարակման մասին չէ: Վերջին զարգացումների համադրությունը ցույց է տալիս, որ Բաքուն պատմամշակութային թեման ավելի ակտիվորեն ներառում է իր դիվանագիտական եւ քաղաքական օրակարգում՝ փորձելով միջազգային լսարանին ներկայացնել Հայաստանի տարածքի վերաբերյալ իր պատմական մեկնաբանությունները որպես գիտական ուսումնասիրության եւ ապագա «վերադարձի» հիմք:

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՇԱԲՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՀԱՄԱԼԲՈՒՄԸ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարել է, որ երկիրը մեծ քանակությամբ զինամթերք ունի եւ շարունակում է պաշարների համալրումը: «Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ այս մասին նա գրել է իր Truth Social հարթակում: Նա «խաբեբաներ եւ դավաճաններ» է անվանել բոլոր նրանց, ովքեր ասում են, թե Միացյալ Նահանգներում զինամթերքի պակաս կա:

«Դա ճիշտ չէ: Մենք ավելի շատ զինամթերք ունենք, քան երբեւէ կարող ենք օգտագործել, եւ այժմ դրա պաշարները համալրում ենք նախկինում երբեք չտեսնված ծավալներով», - հայտարարել է ԱՄՆ նախագահը:

Անցյալ շաբաթ ԱՄՆ պաշտպանության նախարարության գլխավոր տեսուչը հայտարարել էր, որ Իրանի դեմ պատերազմը հանգեցրել է զինամթերքի պակասի եւ մատակարարման գործընթացում խոչընդոտների: Ջեկույցում նշվել է, որ փետրվարից հունիս ընկած ժամանակահատվածում ԱՄՆ-ն ավելի քան 22 միլիարդ դոլար է ծախսել զինամթերքի վրա, ինչը հանգեցրել է «ռազմավարական նշանակության պաշարների պակասի»:

Մեկնաբանելով այս զեկույցը՝ Սպիտակ տունը նույնպես հայտնել էր, որ ԱՄՆ-ն «ավելի քան բավարար չափով» զինամթերք ունի:

ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ

Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը Նյու Յորքում ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի շրջանակներում հանդիպել է Ուկրաինայի նախագահ Վոլոդիմիր Զելենսկու հետ: «Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ Մակրոնը X-ում գրառման մեջ հանդիպումը որակել է որպես «հանգամանալից»:

«Ուկրաինայի էներգետիկ ենթակառուցվածքների ուղղությամբ ռուսական հարվածները սպառնում են միլիոնավոր ընտանիքների զրկել ջեռուցումից եւ էլեկտրաէներգիայից: Ֆրանսիան կաջակցի Ուկրաինային՝ հաղթահարելու ճմեռը, եւ G7-ի էներգետիկայի խումբը նույնպես կմոբիլիզացնի իր ջանքերը՝ լինելով նրա կողքին», - գրել է նա:

Բացի այդ, ըստ Ֆրանսիայի նախագահի՝ ռադարների եւ կալանիչ հրթիռների մատակարարման պայմանագրի ստորագրմամբ կամրապնդվի Ուկրաինայի հակաօդային պաշտպանությունը:

Մակրոնը հավելել է, որ այս աջակցության հարցը քննարկել է նաեւ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի հետ: Բացի այդ, նա նշել է, որ իր ամերիկացի գործընկերոջ հետ քննարկել է «էներգետիկ հրադադարի եւ Սեւ ծովում մորատորիումի հեռանկարը, որին մենք աջակցում ենք»:

«Սա առանցքային հարց կլինի բանակցություններում, որոնք պետք է վերսկսվեն եւ հանգեցնեն արդար եւ տեւական խաղաղության», - հայտարարել է Ֆրանսիայի նախագահը:

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ԱՐԴԱՐԱՑՐԵՑ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ «ԴԱՎԱՃԱՆ» ԱՆՎԱՆԱԾ ՔԱՂԱՔԱՑՈՒՆ

Երեւանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը՝ դատավոր Մուշեղ Արամյանի նախագահությամբ, արդարացրել է նախընտրական շրջանում կալանավորված Արտակ Ավետիսյանին:

Հիշեցնենք, որ Արտակ Ավետիսյանը Շենգավիթում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական քարոզարշավի ժամանակ «Նիկոլ, դավաճան» արտահայտությունն անելուց հետո բերման էր ենթարկվել: Ավելի ուշ նրա նկատմամբ քրեական հետապնդում էր իրականացվել:

Արտակ Ավետիսյանի արդարացման ֆոնին ArmLur.am-ը ուսումնասիրել է գործը քննած դատավոր Մուշեղ Արամյանի հայտարարագիրը՝ պարզելու, թե ի՞նչ ունեցվածք ունի:

Ո՞վ է Մուշեղ Արամյանը

Մուշեղ Արամյանը Երեւանի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր է:

Հայտարարագրի համաձայն՝ 2025 թվականի սկզբին Մուշեղ Արամյանն ունեցել է 2017 թվականի արտադրության Nissan, որը ձեռք էր բերել 2022 թվականի սեպտեմբերի 30-ին: 2025 թվականի օգոստոսի 6-ին նա Nissan-ը վաճառել է 3 մլն 100 հազար դրամով: Նույն տարվա սեպտեմբերի 15-ին դատավորը 7 մլն 92 հազար դրամով ձեռք է բերել 2023 թվականի արտադրության Tesla:

Եկամուտ

2025 թվականին Մուշեղ Արամյանի հայտարարագրած ընդհանուր եկամուտը կազմել է 14 մլն 805 հազար 16 դրամ: Դրանից 14 մլն 393 հազար 904 դրամը Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմի՝ Դատական դեպարտամենտի կողմից ստացած աշխատավարձն է:

Բացի այդ, դատավորը եկամուտներ է ստացել քաղաքացիական պայմանագրերով եւ Մովսես Խորենացու անվան համալսարանից:

Դրամական միջոցներ

Տարվա սկզբին Մուշեղ Արամյանը հայտարարագրել է 11 հազար դոլար կանխիկ գումար, որը տարեվերջին մնացել է նույնը: Միաժամանակ, նրա կանխիկ դրամական միջոցները տարվա սկզբի 7 մլն դրամից նվազել են՝ հասնելով 5 մլն դրամի: Բանկային հաշիվների մնացորդները եւս տարվա ընթացքում փոփոխվել են:

Հայտարարագրի համաձայն՝ 2025 թվականի սկզբին եւ վերջում Մուշեղ Արամյանի անունով անշարժ գույք չի եղել: Տարվա ընթացքում նա անշարժ գույք չի ձեռք բերել կամ օտարել:

Այսպիսով, Արտակ Ավետիսյանի գործով արդարացման որոշումը կայացրել է Մուշեղ Արամյանը, որի 2025 թվականի հայտարարագրում, ի թիվս այլ տվյալների, արձանագրված է 7 մլն 92 հազար դրամով Tesla-ի ձեռքբերումը, 14 մլն 805 հազար 16 դրամ ընդհանուր եկամուտը եւ 11 հազար դոլար կանխիկ միջոցը:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԿԵՂԾ ԽՄԻՉՔ

Ապօրինի ձեռնարկատիրությունը քրեորեն պատժելի արարք է, իսկ կեղծ ալկոհոլային խմիչք պատրաստելու եւ իրացնելու դեպքում կարող է նաեւ վտանգվել մարդկանց առողջությունը: Ոստիկանությունը հորդորում է չզբաղվել ապօրինի ձեռնարկատիրությամբ եւ հիշեցնում, որ իրավապահ մարմինները նման դեպքերը բացահայտելու հարցում հետեւողական են: Ապօրինի ձեռնարկատիրությամբ զբաղվելու հերթական դեպքերն են բացահայտել Քանաքեռ-Զեյթունի եւ Արմավիրի բաժինների համայնքային ոստիկանները:

Համայնքային ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժնի ծառայողները սեպտեմբերի 14-ին օպերատիվ տեղեկություն էին ստացել, որ Քանաքեռի փողոցի 51-ամյա բնակիչը, առանց համապատասխան թույլտվության, պատրաստում եւ իրացնում է ոգելից խմիչքներ:

Նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում կատարված զննությամբ 51-ամյա տղամարդու ավտոտնակում հայտնաբերվել են օղիով եւ կոնյակով լցված 10-լիտրանոց տարաներ, 12 շիշ օղի, օղու դատարկ շշեր, խցաններ, ակցիզներ: Կեղծ ալկոհոլային խմիչք պատրաստելու վերաբերյալ օպերատիվ տեղեկություն էին ստացել նաեւ Համայնքային ոստիկանության Արմավիրի բաժնի ծառայողները: Ըստ տեղեկության՝ Բամբակաշատ գյուղի 62-ամյա բնակիչը, առանց համապատասխան թույլտվության, իրացնելու նպատակով պատրաստում է կեղծ օղիներ:

Նախաձեռնվել է քրեական վարույթ: 62-ամյա տղամարդու տան եւ կից օժանդակ շինության զննությամբ հայտնաբերվել է առանց համապատասխան ակցիզի 92 շիշ օղի:

Երկու դեպքով էլ կատարվում է նախաքննություն:

1400 ԳՐԱՄ ՄԱՐԻԽՈՒԱՆԱ

Քրեական ոստիկանության Սյունիքի մարզային վարչության ծառայողները թմրամիջոցների ապօրինի շրջանառության վերաբերյալ ստացած օպերատիվ տեղեկությունն իրացրին օգոստոսի 18-ին: Ցերեկվա ժամը երկուսին մոտ Կապան-Երեւան ճանապարհին, Վերին Խոտանան գյուղի ցուցանակի տակից փաթեթ վերցնելու պահին քրեական ոստիկանները մոտեցան նույն գյուղի բնակիչ 42-ամյա տղամարդուն: Տեսնելով իրավապահներին՝ տղամարդը նետեց փաթեթն ու դիմեց փախուստի, սակայն արագ էլ բռնվեց, ձերբակալվեց եւ տեղափոխվեց վարչություն: Փաթեթը նետելու վայրը վերցվեց պահպանության:

Կազմված փաստաթղթերը եւ 42-ամյա տղամարդը ներկայացվեցին Սյունիքի մարզային քննչական վարչություն, որտեղ նախաձեռնվեց քրեական վարույթ, որի շրջանակում կատարված զննությամբ հայտնաբերվեց նետած փաթեթը: Այն պարունակում էր մոտ 1400 գրամ մարիխուանա:

Տղամարդը կալանավորվել ու տեղափոխվել է քրեակատարողական հիմնարկ:

Նախաքննությունը շարունակվում է:

ԼՈՒՐԵՐ

ԼԱՐՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿ

Փարաքարի ընտրված համայնքապետ Վալոդյա Գրիգորյանի սպանության գործով մեղադրյալ Գեւորգ Հարությունյանի տան դիմաց մի քաղաքացի բողոքի ակցիա էր իրականացնում՝ պահանջելով ոստիկանության աշխատակիցներին կարգի հրավիրել, քանի որ տեւական ժամանակ է, ինչ ոստիկանների աղմուկի պատճառով իրենց քունն ու անդորրը խաթարվել է: Մերձավանի բնակիչը պահանջում էր՝ ոստիկանության ղեկավար կազմից գան եւ խնդրին լուծում տան:

Բանն այն է, որ 2025 թվականի սեպտեմբերի 23-ին Վալոդյա Գրիգորյանի սպանությունից հետո ոստիկանությունը Մերձավանում ուժեղացված ծառայություն սկսեց: Ոստիկանները անվտանգություն են իրականացնում Վալոդյա Գրիգորյանի սպանությունը կատարող Գեւորգ Հարությունյան տան մոտ:

Եւ ահա, ըստ բնակչի, ոստիկանները գիշերները աղմկում են, բարձր ծիծաղում ու իրենց անդորրը խաթարում: Մի քանի անգամ, բնակչի պատմելով, Մերձավանի ոստիկանության պաշտոնատար անձանց ասել են, սակայն խնդիրը չի կարգավորվել:

Ք. Մ.

ՎՐԱԵՐԹ

Սեպտեմբերի 21-ին վրաերթ է տեղի ունեցել Արարատի մարզում: Ժամը 15:30-ի սահմաններում Այնթապ բնակավայրի Երեւանյան խճուղում Արմավիրի մարզի բնակիչ 63-ամյա Վարդան Գ.-ն իր վարած «Ruichi» մակնիշի ավտոմեքենայով վրաերթի է ենթարկել 3 հետիոտնի:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, վարորդը փախուստի չի դիմել, ահազանգել է շտապօգնություն, եւ օպերատիվորեն ժամանած շտապօգնության բժիշկների հերթապահ խումբը վրաերթի ենթարկվածներին, որոնցից երկուսը անչափահասներ են, տեղափոխել է «Էրեբունի» բժշկական կենտրոն: Դեպքի վայր են ժամանել ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Պարեկային ծառայության Արարատի մարզի գումարտակի 1-ին վաշտի 2-րդ դասակի պարեկները՝ գումարտակի ծառայության ավագ տեսուչ Սահակ Թադեւոսյանի, վաշտի հրամանատար Արսեն Բաղդասարյանի եւ դասակի հրամանատարի տեղակալ Անդրանիկ Հարությունյանի գլխավորությամբ:

Տարածքը սահմանազատել են նույն վաշտի պարեկներ Աֆթանդիլ Հակոբյանը եւ Ֆրունզե Հովհաննիսյանը: Դեպքի մասին ՊԾ Արարատի մարզի գումարտակից տեղեկությունը փոխանցել են ՀՀ Քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության Մասիսի քննչական բաժին, որտեղից ժամանել է քննչական խումբը՝ բաժնի պետ Դավիթ Բաղդասարյանի եւ օրվա հերթապահ քննիչի գլխավորությամբ:

Վթարի փաստով Մասիսի քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ, որտեղ էլ պարզվում են վրաերթի ենթարկվածների ինքնությունը:

ԿՎԵՐԱԴԱՐՁՎԻ

Գլխավոր դատախազության բողոքը, 2026 թվականի սեպտեմբերի 11-ին, Վերաքննիչ վարչական դատարանի որոշմամբ ամբողջությամբ բավարարվել է. Վարչական դատարանի՝ 2024 թվականի մարտի 11-ի վճիռն ամբողջությամբ բեկանվել է եւ փոփոխվել: Գլխավոր դատախազության հայցի հարուցման համար հիմք էր հանդիսացել այն հանգամանքը, որ Երեւանի քաղաքապետի՝ «Ազատության պողոտայի 2/5 հասցեում կառուցապատման իրավունքով տրամադրված հողամասը ««Գոլդեն Փելիս» հյուրանոց» ՍՊ ընկերությանն օտարելու մասին» 2008 թվականի ապրիլի 8-ի թիվ 1619-Ա որոշմամբ, ««Գոլդեն Փելիս» հյուրանոց» ՍՊ ընկերությանն օտարվել է 10000 քմ մակերեսով հողամաս, որը գտնվել է Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակման տիրույթում եւ օտարման ենթակա չի եղել: Վերաքննիչ վարչական դատարանի դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո, որպես հետեւանք, անվավեր կճանաչվեն նաեւ Երեւանի քաղաքապետի վերոնշյալ որոշման լրացումները, ինչպես նաեւ Երեւանի քաղաքապետի եւ ««Գոլդեն Փելիս» հյուրանոց» ՍՊ ընկերության միջեւ 2008 թվականի մայիսի 29-ին կնքված հողամասի ուղղակի վաճառքի մասին թիվ 4204 պայմանագիրը, ընկերության սեփականության իրավունքի պետական գրանցումը, եւ «Հաղթանակ» զբոսայգու տարածքում գտնվող 10000 քմ մակերեսով հողատարածքը կվերադարձվի Հայաստանի Հանրապետությանը:

● *Սեպտեմբերի 7-ից 14-ը մայրաքաղաքում բացահայտվել է թաղանթապատված դիմապակիով եւ կողային ապակիներով 38 մեքենա:*

ՄԱՐԶ

ԱՆՏԱՌԱՊԵՏ ԼԻՆԵԼՈՎ՝ 5 ՀԱՏԱՏԵՂ ՈՒՆԻ

Տավուշի մարզի բնակիչները լրագրողիս բողոքել են, որ մարզի Իջեւանի, Սեւքարի, Արծվաբերդի անտառտնտեսության անտառներում անօրինական, մեծածավալ հատումները շարունակվում են: Տավուշցիները դժգոհում են, որ անտառամերձ գյուղերի բնակիչները չեն կարողանում անտառից օգտվել, գոնե վառելափայտի թափուկ պատրաստել, իսկ իշխանության հետ սերտ կապեր ունեցող անձինք անօրինական մեծ հատումներ են կատարում:

Տավուշի գյուղերում վաճառվող մեկ խորանարդ մետր վառելափայտի գինը հասել է 25 հազար դրամի: Իջեւան համայնքի Սեւքար գյուղի բնակիչ, Իջեւան համայնքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ, Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանի մորաքրոջ որդի, 1976թ. ծնված Կարեն Ծովանյանը Սեւքարի անտառտնտեսությունում աշխատում է որպես անտառապետ: Նա նույն՝ Սեւքարի անտառտնտեսության անտառներում պայմանագրերով 5 հատատեղ ունի, ուր մեծածավալ ծառահատումներ են կատարվում: Նա ինչպե՞ս է համատեղում անտառների պահպանությանը կոչված անտառապետի գործը նույն անտառներում իր կողմից իրականացվող մեծածավալ հատումների հետ:

Սեւքար գյուղի բնակիչներն ասում են, որ Սեւքարի անտառտնտեսության նախկին տնօրեն Աշոտ Երիցյանի ժամանակ տեղի անտառները համեմատաբար լավ էին պահպանվում:

Իջեւան համայնքում փայտածուխի բազում արտադրամասեր են գործում: Իջեւանցիներն ահազանգել են, որ այդ քաղաքի «Խոզմարագ» հանդամասում մեծ հատումներ են կատարվել, տեղի սոճուտը հատել են, կտրված ծառերի մի մասը տեղում ընկած է, չեն տեղափոխել, քանի որ այդ առթիվ քրեական ինչ-որ գործ է հարուցված: Իջեւանցիները հայտնում են նաեւ Իջեւան քաղաքի «Խոլարքեր» հանդամասում, Ենոքավանի անտառներում կատարված մեծածավալ հատումների վերաբերյալ: Բնակիչներն ասում են, որ մարդու լացն է գալիս, երբ տեսնում են հատված ծառերի մեծ քանակը: Այնքան շատ ծառեր են հատել, որ անտառը գրեթե վերացել է. հատված ծառերի տեղում հարյուրավոր փոքր տնկիներ են բուսնել, որոնք մացառուտի նման փակում են անտառը, նույնիսկ անտառամիջյան ճանապարհները: Իջեւանցիները հայտնում են, որ Իջեւանի անտառտնտեսության տնօրեն Միհեր Ղալթախչյանը Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանի հետ շատ մտերիմ է: Մի քանի տարի առաջ մարզպետ Հայկ Ղալումյանի անունը շրջանառվեց Իջեւանում ապօրինի ծառահատման աղմկահարույց մի դեպքի առնչությամբ, սակայն մարզպետը ժխտեց պատահարին իր մասնակցությունը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ՀՀԾ-ԻՑ՝ «ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ», ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻՑ՝ ԴԵՍՊԱՆ

ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանի՝ սեպտեմբերի 18-ի հրամանագրով Ալեքսանդր Արզումանյանը հետ է կանչվել Լեհաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպանի պաշտոնից: Հրամանագրում որպես հիմք նշվում է վարչապետի առաջարկությունը:

Ո՞վ է Ալեքսանդր Արզումանյանը

Ալեքսանդր Արզումանյանը ծնվել է 1959 թվականի դեկտեմբերի 24-ին Երեւանում: Կրթությամբ մաթեմատիկոս է. ավարտել է Մոսկվայի Ժողովուրդների բարեկամության համալսարանի մաթեմատիկայի ֆակուլտետը: Մինչեւ քաղաքականություն մտնելը աշխատել է որպես ինժեներ-ծրագրավորող: Նրա քաղաքական ճանապարհը սկսվել է 1988-ի Ղարաբաղյան շարժման տարիներին: 1988-1990 թվականներին նա ղեկավարել է Հայոց համազգային շարժման լրատվական կենտրոնը եւ զբաղվել շարժման տեղեկատվական աշխատանքով: 1990-1991 թվականներին եղել է ՀՀ Գերագույն խորհրդի նախագահի օգնական:

Անկախ Հայաստանի առաջին դիվանագետներից

1991 թվականին Արզումանյանը գործուղվել է ԱՄՆ՝ Հայաստանի նորաստեղծ դիվանագիտական ներկայացուցչությունները ձեւավորելու նպատակով: Շատ արագ նա հայտնվել է նորանկախ Հայաստանի արտաքին քաղաքականության առանցքային պաշտոններում:

- 1992-1993 թթ.՝ ԱՄՆ-ում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան,
- 1992-1996 թթ.՝ ՄԱԿ-ում Հայաստանի մշտական ներկայացուցիչ,
- 1996-1998 թթ.՝ Հայաստանի արտաքին գործերի նախարար:

Այսինքն՝ Արզումանյանը փաստացի պատկանում է այն դիվանագետների սերնդին, որոնք ձեւավորեցին Հայաստանի առաջին արտաքին դիվանագիտական համակարգը:

1998. հրաժարական՝ Տեր-Պետրոսյանի հետ

Արզումանյանի քաղաքական կենսագրության ամենանշանակալի դրվագներից մեկը 1998 թվականի հրաժարականն է:

1998-ի փետրվարին Լեւոն Տեր-Պետրոսյանը հրաժարական տվեց նախագահի պաշտոնից՝ Լեռնային Ղարաբաղի կարգավորման հարցում իր եւ իշխանության մյուս առանցքային ներկայացուցիչների միջեւ խորացած տարաձայնությունների ֆոնին: Արզումանյանը եւս հրաժարական տվեց արտաքին գործերի նախարարի պաշտոնից: Այդ ժամանակ միջազգային մամուլը նրա հրաժարականը կապում էր Ղարաբաղյան կարգավորման վերաբերյալ Տեր-Պետրոսյանի դիրքորոշմանը նրա աջակցելու հետ:

Դրանից հետո նա հեռացավ պետական պաշտոններից եւ երկար ժամանակ զբաղվեց քաղաքական ու հասարակական գործունեությամբ:

ՀՀԾ-ի ղեկավարից՝ ընդդիմադիր քաղաքական գործիչ

2000-2002 թվականներին Արզումանյանը ղեկավարել է Հայոց համազգային շարժման վարչությունը: Հետագայում զբաղվել է մարդու իրավունքների, ժողովրդավարության եւ տարածաշրջանային համագործակցության թեմաներով: Նա նաեւ եղել է Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի հիմնադիր անդամներից մեկը՝ 2001-2004 թվականներին:

2006 թվականին նրա քաղաքական գործունեության ընթացքում եղել է նաեւ ազատազրկման դրվագ.նա «Քաղաքացիական անհնազանդություն» շարժման նախաձեռնողներից էր եւ մի քանի ամիս ազատազրկվել է:

2008-ի նախագահական ընտրություններ եւ «Յոթի գործ»

Արզումանյանի քաղաքական կենսագրության հաջորդ կարեւոր փուլը 2008 թվականի նախագահական ընտրություններն էին: Նա դարձավ Լեւոն Տեր-Պետրոսյանի կենտրոնական նախընտրական շտաբի պետը:

2008-ի հետընտրական իրադարձություններից հետո Արզումանյանը եւս հայտնվեց քրեական հետապնդման եւ ազատազրկման մեջ՝ «Յոթի գործի» շրջանակում: Ըստ հրապարակված կենսագրական տվյալների՝ նա ազատ է արձակվել 2009 թվականի հունիսին՝ համաներմամբ:

Պատգամավոր՝ «Ժառանգության» ցուցակով

2012 թվականին Արզումանյանը վերադարձավ խորհրդարանական քաղաքականություն՝ ընտրվելով ԱԺ պատգամավոր «Ժառանգություն» կուսակցության համամասնական ցուցակով: Եղել է ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ: Հետագայում նա քաղաքական ճանապարհ է անցել նաեւ «Ազատ դեմոկրատներ» կուսակցությունում, իսկ հետո վերադարձել է ՀՀԾ-ի քաղաքական շրջանակ:

Եւ նորից՝ դիվանագիտական ծառայություն

Հետաքրքիր շրջադարձ է տեղի ունեցել 2017-ին. տարիներ շարունակ ընդդիմադիր քաղաքական դաշտում գտնվելուց հետո Արզումանյանը կրկին վերադարձել է պետական դիվանագիտական ծառայության.

2017-2019թթ.՝ Հայաստանի դեսպան Դանիայում եւ Նորվեգիայում,

2019-2023թթ.՝ Հայաստանի դեսպան Շվեդիայում,

2023թ. սեպտեմբերից՝ Հայաստանի դեսպան Լեհաստանում:

Լեհաստանում նրա հավատարմագրերը ընդունվել են 2023 թվականի հոկտեմբերի 26-ին:

Եւ ահա 2026 թվականի սեպտեմբերի 18-ին նա հետ է կանչվել Լեհաստանում Հայաստանի դեսպանի պաշտոնից:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԿՈՉ Է ԱՆՈՒՄ ՎԵՐԱՑՆԵԼ

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը կոչ է արել անցկացնել ՄԱԿ-ի լայնածավալ բարեփոխում, որը նախատեսում է Անվտանգության խորհրդում վետոյի իրավունքի վերացում, մշտական անդամության ինստիտուտից հրաժարում եւ Գլխավոր ասամբլեայի լիազորությունների ընդլայնում, հայտնում է ՏԱՍՍ-ը:

Bloomberg գործակալության համար «ՄԱԿ-ը պետք է վերացնի Անվտանգության խորհրդի վետոյի իրավունքը» վերնագրով հոդվածում թուրքական առաջնորդն ընդգծել է, որ այս քայլը համարում է ՄԱԿ-ի բարեփոխման կենտրոնական տարր: Նրա կարծիքով՝ Անվտանգության խորհրդի արտոնյալ անդամների թվի պարզ ընդլայնումը չի լուծի սահմանափակ թվով պետությունների ձեռքում լիազորությունների կենտրոնացման խնդիրը: Թուրքիայի նախագահն առաջարկել է Գլխավոր ասամբլեայում ձեւավորել լայն կոալիցիա այն սկզբունքի շուրջ, ըստ որի՝ ոչ մի պետություն չպետք է կարողանա մշտապես արգելափակել մեծամասնության կամքը:

Թուրքական առաջնորդը հանդես է եկել նաեւ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ձեւավորման սկզբունքի փոփոխության օգտին: Նրա համոզմամբ՝ այնտեղ մշտական անդամներ չպետք է լինեն, եւ երկրները պետք է ընտրվեն Գլխավոր ասամբլեայի կողմից որոշակի ժամկետով եւ ռոտացիոն հիմունքներով: «Մենք չենք կարող կառուցել ապագայի միջազգային կարգը՝ պահպանելով անցյալի հիերարխիան: Վերջին քառորդ դարի իրադարձությունները, որոնք համաշխարհային պատմության տեսանկյունից բավականին կարճ ժամանակահատված են, ցույց են տվել, որ ոչ մի ուժային հավասարակշռություն եւ ոչ մի միջազգային կարգ հավերժական չէ: Համակարգը, որը մարդկությանը խոստացել էր խաղաղություն, կայունություն եւ ընդհանուր բարգավաճում, անբավարար արդյունավետ է գտնվել նոր պատերազմների կանխարգելման, անհավասարության կրճատման եւ փոփոխվող ուժային հավասարակշռությանն արձագանքելու գործում»,- նշել է Թուրքիայի նախագահը: Էրդողանն այս համատեքստում կրկնել է Անկարայի առաջ քաշած «Աշխարհը հինգից մեծ է» սկզբունքը, որը ենթադրում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հինգ մշտական անդամներին:

«Յուրաքանչյուր տարածաշրջանի խնդիրներն անհնար է լուծել դրսից սահմանված մեթոդներով: Մենք հավատում ենք, որ համապատասխան երկրների կամքի, տեղական պայմանների եւ ընդհանուր շահերի վրա հիմված մոտեցումները կտան ավելի կայուն եւ հաստատուն արդյունքներ: Դիվանագիտական հնարավորություններով, տնտեսական ռեսուրսներով եւ տարբեր կողմերի հետ հաղորդակցություն պահպանելու կարողությամբ օժտված երկրները անխուսափելիորեն պետք է ավելի ակտիվ դեր խաղան խաղաղության եւ կայունության հաստատման գործում»,- նշել է Էրդողանը:

Առանձնահատուկ կերպով նախագահը անդրադարձել է նաեւ միջազգային համակարգի բարեփոխման տնտեսական բաղադրիչին: Նրա խոսքով՝ այն սպասումները, թե գլոբալիզացիան ինքնին կապահովի բարեկեցության տարածումը, ամբողջությամբ չեն արդարացել, մինչդեռ եկամուտների բաշխման անհավասարությունը խորացել է, իսկ տեխնոլոգիաներն ու տնտեսական կախվածությունները վերածվել են մրցակցության նոր ոլորտների:

● *Մարզերում սեպտեմբերի 7-ից 14-ը բացահայտվել է թաղանթապատված դիմապակիով եւ կողային ապակիներով 90 մեքենա:*

ԼՈՒՐԵՐ

ԲԱՑՎԵԼ Է 40-ՐԴ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԸ

Ֆասթ Բանկն Ապարան քաղաքում օրերս բացել է հոբելյանական 40-րդ մասնաճյուղը՝ ավելի հասանելի դարձնելով Բանկի ծառայությունները տարածաշրջանի բնակիչների համար: Նոր մասնաճյուղը նախագծված է միջազգային լավագույն ստանդարտներով՝ ապահովելով հարմարավետություն, արագություն եւ բարձրակարգ սպասարկում:

Ֆասթ Բանկի հաճախորդի փորձի կառավարման ծառայության ղեկավար Էլեն Խաչատրյանը նշել է, որ նոր մասնաճյուղն ընդգրկում է Բանկի ծառայությունների ողջ փաթեթը. «Ֆասթ Բանկում մեզ համար կարեւոր է յուրաքանչյուր հաճախորդի փորձառությունն ու հարմարավետությունը մեր մասնաճյուղերում, ինչպես նաեւ Բանկը կարեւորում է հաճախորդների գերազանց սպասարկումը: Սիրով հրավիրում ենք մեր բոլոր հաճախորդներին Ապարանի նորաբաց մասնաճյուղ, որտեղ սպասում են լուսավոր եւ հարմարավետ սպասարկման սրահ հագեցած ժամանակակից տեխնոլոգիաներով: Հավելենք նաեւ, որ Ապարան մասնաճյուղը գործում է 24/7 ժամային գրաֆիկով», - ասել է նա:

Ապարանի մասնաճյուղում հասանելի են բանկային բոլոր ծառայությունները՝ վարկավորումից ու ավանդների ձեւակերպումից մինչեւ արագ փոխանցումներ եւ 24/7 ինքնասպասարկման հնարավորություն: Ֆասթ Բանկը շարունակում է իր ռազմավարական զարգացումը՝ տարածաշրջանի բնակիչներին հասանելի դարձնելով Բանկի ծառայությունները միաժամանակ զարգանալով նաեւ թվային տիրույթում:

Ֆասթ Բանկը շարունակաբար ընդլայնում է իր ծառայությունների շրջանակը՝ առաջարկելով 24/7 արագ, հարմարավետ եւ անվտանգ ֆինանսական լուծումներ Երեւանում եւ Հայաստանի բոլոր մարզերում:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից (Գ)

ՆԵՐԿԱ Է ԳՏՆՎԵԼ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը ներկա է գտնվել «Առասպելներ, պաշտամունքներ եւ տիեզերագիտություն. Բեռլինի Թանգարանային կղզին Հայաստանի պատմության թանգարանում» բացառիկ միջազգային նոր ցուցադրության բացմանը: Ցուցադրությունը կազմակերպվել է ՀՀ անկախության 35-ամյակի եւ Բեռլինի Թանգարանային կղզու 200-ամյակի առիթով: Ցուցադրությանը ներկայացված են Բեռլինի թանգարանային կղզու վեց թանգարաններից բերված ավելի քան 50 նմուշներ՝ դրանք համադրելով Հայաստանի պատմության թանգարանի հարուստ հավաքածուներից ընտրված ցուցանմուշների հետ: Ցուցադրությունը կգործի մինչեւ 2027թ. մարտի 21-ը:

TEAM Գ

«ԳԻՏՈՒԹՅԱՆ ՇԱԲԱԹ 2026»-Ի ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐ

22 սեպտեմբերի, 2026 թ., Երեւան. «Գիտության շաբաթ 2026»-ը այս տարի եւս կմիավորի գիտությամբ ու նորարարությամբ հետաքրքրվող հազարավոր մարդկանց:

Ապակենտրոնացված միջոցառումները ողջ երկրում մեկնարկում են այսօր, իսկ փառատոնային հատվածը կիրականացնի Գիտությունների ազգային ակադեմիան՝ սեպտեմբերի 25-26-ը, ERNA փառատոնի շրջանակում (հասցե՝ ք. Երեւան, Բաղրամյան 24): Team Telecom Armenia-ն ավանդույթի համաձայն նախաձեռնության տեխնոլոգիական գործընկերն է՝ շարունակելով իր աջակցությունը գիտության եւ կրթության հանրահռչակմանը:

«Գիտության շաբաթն» այս տարի անցկացվում է «Հետազոտողն ապրում է յուրաքանչյուրիս մեջ» ուղերձով: «Գիտուժ» նախաձեռնության կազմակերպած ծրագրի շրջանակում երեխաները, երիտասարդներն ու գիտությամբ հետաքրքրված ողջ հանրությունը հնարավորություն կունենան գիտությունը բացահայտելու փորձերի, խաղերի, մրցույթների, ֆիլմերի, քննարկումների եւ այլ ինտերակտիվ ձեւաչափերի միջոցով:

«Գիտության նկատմամբ հետաքրքրությունը ձեւավորվում է այն ժամանակ, երբ մարդուն հնարավորություն է տրվում ոչ միայն լսելու կամ կարդալու, այլեւ փորձելու, հարցնելու եւ բացահայտելու: Հենց այս մոտեցումն է կարեւոր դարձնում «Գիտության շաբաթը», եւ ուրախ ենք մեր տեխնոլոգիական հնարավորություններով նպաստելու գիտելիքի տարածմանն ու նոր գաղափարների զարգացմանը: Team-ի ձեւավորման առաջին օրերից, ընտրելով մեր ռազմավարական առաջնահերթությունները, ցանկացել ենք աջակցել այնպիսի միջավայրի ձեւավորմանը, որտեղ գիտությունն ու նորարարությունը հասանելի եւ հետաքրքիր են հատկապես երիտասարդ սերնդի համար»,-ասում է Team Telecom Armenia-ի կոմերցիոն տնօրեն Տիգրան Ֆրանգյանը:

««Գիտության շաբաթվա» նպատակն է գիտությունն ու տեխնոլոգիաները հանրությանը ներկայացնել ոչ միայն որպես մասնագիտություն, այլեւ որպես մտածելակերպ, հանրային մշակույթ եւ ազգային անվտանգության հիմք: Այն արթնացնում է նոր սերնդի հետաքրքրասիրությունը եւ ձեւավորում Հայաստանի ապագան կառուցող մարդկային ներուժը»,-ասում էր «Գիտուժ» նախաձեռնության անդամ Գեւորգ Սաֆարյանը:

«Գիտության շաբաթ 2026»-ի ծրագրում ընդգրկված են գիտափորձեր եւ կրթական առաջադրանքներ տարբեր տարիքային խմբերի համար, գիտաֆանտաստիկ պատմվածքների մրցույթ, ֆիլմերի ցուցադրություններ, թանգարանային միջոցառումներ, առցանց խաղեր եւ զրույցներ գիտության, արհեստական բանականության ու նորարարության մասին:

Team Telecom Armenia-ի համար գիտության, կրթության եւ նորարարության ոլորտներում նախաձեռնություններին աջակցելը երկարաժամկետ ուղղություն է: Ընկերությունը կարեւորում է հատկապես այն հարթակները, որոնք երիտասարդներին հնարավորություն են տալիս զարգացնելու հետազոտական մտածողությունը, հետաքրքրվելու տեխնոլոգիաներով եւ սեփական գաղափարները վերածելու նոր լուծումների:

Տելեկոմ Արմենիա ԲԲԸ-ն (ապրանքանիշը՝ Team Telecom Armenia) հայկական ընկերություն է, որը առաջատար դիրք է զբաղեցնում երկրի հեռահաղորդակցության եւ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում: Հանդիսանալով Հայաստանում առաջին տելեկոմ ցանցի ժառանգորդը՝ ընկերությունը ունի ոլորտում ծառայությունների մատուցման ավելի քան 100 տարվա պատմություն: Team-ը տրամադրում է բջջային եւ ֆիքսված ինտերնետի, թվային հեռուստատեսության, բջջային եւ ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ թե՛ անհատ, թե՛ կորպորատիվ բաժանորդներին:

Հայաստանի բոլոր բնակիչներին բարձրորակ հեռահաղորդակցության ծառայությունների մատուցումը Team Telecom Armenia-ի նպատակն է: Դրան հասնելու համար ընկերությունն անընդհատ արդիականացնում ու վերազինում է բջջային եւ ֆիքսված ցանցերը, գործարկում նոր միջազգային կապուղիներ, որոնք նաեւ բարձրացնում են Հայաստանում ինտերնետի հուսալիության եւ անվտանգության մակարդակը:

ԲԻԶՆԵՍԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ՝ ԱՎԵԼԻ ՊԱՐԶ ԵՎ ԱՐԱԳ Գ

Ակբա բանկի եւ «Հայկական Ծրագրեր» ընկերության համագործակցության շրջանակում բանկային գործարքներն ու հաշվապահությունը միավորվել են մեկ ամբողջական համակարգում:

Համագործակցության շրջանակում Ակբա բանկը միացել է «Հայկական Ծրագրերի» ՀԾ-կորպորատիվ բանկ ամպային հարթակին՝ բիզնեսին հնարավորություն տալով ֆինանսական գործարքներն իրականացնել անմիջապես հաշվապահական ծրագրից:

Նոր լուծումը նախատեսված է հատկապես փոքր եւ միջին ձեռնարկությունների ու կորպորատիվ հաճախորդների համար՝ ֆինանսական գործառնությունները դարձնելով ավելի արագ, պարզ եւ արդյունավետ: Համակարգի միջոցով բանկային գործարքները, վճարումները եւ քաղվածքների հետ աշխատանքը հնարավոր է իրականացնել անմիջապես հաշվապահական համակարգից՝ առանց տարբեր համակարգերի միջեւ ավելորդ անցումների:

Տեխնոլոգիական լուծումը բիզնեսին ազատում է ամենօրյա կրկնվող եւ տեխնիկական գործողություններից՝ նվազեցնելով ֆինանսական վարչարարության ծավալը եւ խնայելով ժամանակ: Այլեւս անհրաժեշտ չէ ֆայլեր արտահանել կամ ներբեռնել, ինչպես նաեւ նույն տվյալները կրկնակի մուտքագրել: Ֆինանսական հոսքերի կառավարումն իրականացվում է մեկ միասնական հարթակում՝ ապահովելով գործընթացների արագություն եւ տվյալների ճշգրտություն:

«Մենք նոր լուծումներով փորձում ենք հեշտացնել մեր հաճախորդների կյանքը: Կոնկրետ այս համագործակցությունը հիմնականում ուղղված է փոքր եւ միջին ձեռնարկություններին ու կորպորատիվ հաճախորդներին, եւ կարծում եմ, որ առաջարկվող լուծումները հարմարավետ եւ արդյունավետ կլինեն նրանց համար»,- նշել է Ակբա բանկի գլխավոր գործադիր տնօրեն Հակոբ Անդրեասյանը:

«Ակբա բանկը առաջիններից էր, որ ընդունեց մեր առաջարկած լուծումները, ինչը շատ մեծ գնահատական էր մեզ համար: Համակարգը մենք անվանեցինք ՀԾ-կորպորատիվ բանկ, որի միջոցով անհրաժեշտ բոլոր տվյալները մեկ հպումով փոխանցվում են անմիջապես բանկ: Էական է նշել, որ հաշվապահական համակարգից է տվյալը փոխանցվում, ոչ թե համակարգչից: Նույնը գործում է հակառակ ուղղությամբ»,- նշում է «Հայկական Ծրագրեր» ընկերության հիմնադիր տնօրեն Աշոտ Խաչատրյանը:

«Մենք փորձում ենք ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ բիզնեսները կկարողանան իրականացնել իրենց առօրյա ֆինանսական, բանկային գործառնությունները՝ առանց համակարգերի միջեւ անցումներ կատարելու: Արդյունքում նրանք կխնայեն էական ժամանակ եւ այն կտրամադրեն իրենց բիզնեսի զարգացմանը»,- նշում է Ակբա բանկի ՓՄՁ եւ կորպորատիվ բիզնեսի տնօրեն Հակոբ Հակոբյանը:

Ակբա բանկը շարունակելու է ներդնել նորարարական գործիքներ՝ Հայաստանում բիզնեսի կառավարումն ավելի արդյունավետ դարձնելու համար:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄԱՅԼԻ ՍԱՅՐՈՒՍ

ԻՆՉՊԵՍ Է ՀԱՄՈՔԵԼ ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՆԱԼ «ԳՐԵՄՄԻ»-ԻՆ

Մայլի Սայրուսը խոստովանել է, որ 2024 թվականի «Գրեմմի» մրցանակաբաշխության ժամանակ գուցե չբարձրանար բեմ, եթե չլիներ իր կնքամոր՝ Դոլլի Փարթոնի համոզիչ աջակցությունը:



Apple Music-ի Ջեյն Լոուի հետ զրույցում Սայրուսը պատմել է, որ սկզբում մեծ երկմտանք ուներ մրցանակաբաշխության ժամանակ «Flowers» երգը կատարելու հարցում: Երգչուհին դեռ հիշում էր 2022 թվականին Մեքսիկայում ունեցած ելույթի ժամանակ իր ապրած ուժեղ տագնապային նոպան եւ վախենում էր կրկին հայտնվել նման իրավիճակում:

Սակայն Փարթոնը նրան խորհուրդ է տվել չտրվել վախին եւ բեմ բարձրանալ: Սայրուսի խոսքով՝ Փարթոնը նույնիսկ կատակով այնքան էր պնդել իր ասածը, որ «թակարդել» էր իրեն մեքենայում, երբ եկել էր նրան վերցնելու:

«Դոլլին միշտ ճիշտ էր նման հարցերում»,-հիշել է Սայրուսը

Փարթոնը նրան խորհուրդ էր տվել փոխել իր տրամադրությունը, հարդարել մազերը, ընտրել իրեն դուր եկող զգեստ եւ բեմում մտնել իր տարբեր կերպարների մեջ:

«Նա ասաց՝հագիր այն զգեստը, որը սիրում ես, եւ այդ պահին կմոռանաս ամեն ինչ: Դու ունես քո Հաննա Մոնտանային, քո Դոլլի Փարթոնին, քո ՌուՓոլին: Քո մեջ կա այդ կողմը»,-պատմել է Սայրուսը՝ փոխանցելով Փարթոնի խորհուրդը:

Երգչուհու խոսքով՝ նման մոտեցում օգտագործում են նաեւ զինվորականներն ու բարձրակարգ մարզիկները՝ անհրաժեշտ պահին իրենց մեջ մեկ այլ, ավելի վստահ կերպար արթնացնելու համար:

Փարթոնի խորհուրդը Սայրուսին տրված միակ կարեւոր աջակցությունը չէր: Ավելի վաղ երգչուհին զրուցել էր «Saturday Night Live»-ի ստեղծող եւ պրոդյուսեր Լորն Մայքլսի հետ: Սայրուսը պատմել է, որ նրանք ամեն տարի Սուրբ Ծննդյան շրջանում հանդիպում են Նյու Յորքի Ռոքֆելլեր կենտրոնում եւ շրջում տոնածառի շուրջ՝ քննարկելով անցած տարվա իրադարձությունները:

Մայքլսը եւս նրան հորդորել էր վերադառնալ բեմ եւ չմնալ վախի մեջ: Նրա խոսքով՝ շատ արտիստներ տարբեր պահերի հայտարարել են, որ հեռանում են կամ այլեւս չեն ցանկանում շարունակել, սակայն դա չի նշանակում, որ պետք է իսկապես հրաժարվել կարիերայից:

Սայրուսը նշել է, որ հենց այդ զրույցից հետո «Գրեմմի»-ի կազմակերպիչները նրան առաջարկեցին ելույթ ունենալ, իսկ ավելի ուշ Նեշվիլում նա հանդիպեց Փարթոնին: Փարթոնը եւս վճռականորեն համոզեց նրան ընդունել առաջարկը:

Արդյունքում Սայրուսը «Գրեմմի»-ի բեմում կատարեց «Flowers»-ը՝ Բոբ Մաքիի հեղինակած փայլուն զգեստով: Ելույթը դարձավ երեկոյի ամենաքննարկված պահերից մեկը, իսկ նույն երեկոյան երգչուհին ստացավ իր կարիերայի առաջին երկու «Գրեմմի» մրցանակները՝ «Լավագույն փոփ մենակատար կատարում» եւ «Տարվա ձայնագրություն» անվանակարգերում:

Սայրուսը խոստովանել է, որ Փարթոնի եւ Մայքլսի նման մարդկանց ներկայությունը իր կյանքում օգնել է իրեն ճիշտ պահին ճիշտ որոշումներ ընդունել:

«Նրանք գիտեն, որ ես դա ուզում եմ: Ես, հավանաբար, այնքան թերապիա եմ անցել, որ գիտեմ ճիշտ պատասխանը, բայց երբեմն ճիշտ պատասխանը շատ ավելի ինտուիտիվ բան է»,-ասել է երգչուհին:

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ Է ՍՏՈՐԱԳՐԵԼ OPEC-Ի ՀԵՏ

Հայէկոնոմբանկը 35 միլիոն ԱՄՆ դոլարի սինդիկացված վարկային պայմանագիր է կնքել OPEC Միջազգային զարգացման հիմնադրամի հետ՝ միկրո, փոքր եւ միջին ձեռնարկությունների (ՄՓՄՁ) ֆինանսավորման հասանելիությունն ընդլայնելու նպատակով:

Ֆինանսավորումը բաղկացած է OPEC-ի սեփական միջոցներից տրամադրվող 20 միլիոն ԱՄՆ դոլարի A-վարկից եւ 15 միլիոն ԱՄՆ դոլարի B-վարկից, որը տրամադրվել է Allianz Global Investors-ի կողմից կառավարվող Allianz Credit Emerging Markets Fund-ի կողմից: ՄՓՄՁ-ներին աջակցությունից բացի OPEC Հիմնադրամի A-վարկը կարող է ուղղվել նաեւ կլիմայական համապատասխան նախագծերի ֆինանսավորմանը:

Սինդիկացված վարկային պայմանագրի ստորագրումն առանձնահատուկ նշանակություն ունի, քանի որ համընկնում է երկու կարեւոր իրադարձությունների՝ OPEC Հիմնադրամի 50-ամյա հոբելյանի եւ Հայէկոնոմբանկի 35-ամյակի հետ:

«Վերջին տարիների Հայաստանի բարձր տնտեսական աճը խթանում է ֆինանսավորման պահանջարկը, եւ OPEC Հիմնադրամի այս վերջին վարկը կարեւոր ներդրում է այս կենսական մատակարարումը պահպանելու գործում: Նոր ֆինանսական ռեսուրսները կնպաստեն հետագա տնտեսական ընդլայնմանը, աշխատատեղերի ստեղծմանն ու նոր հնարավորությունների ապահովմանը: Կենտրոնանալով միկրո եւ փոքր ձեռնարկությունների վրա՝ մենք հզորացնում ենք ազգային տնտեսության այն կարեւոր հատվածը, որտեղ ֆինանսների հասանելիությունը հաճախ խոչընդոտ է հանդիսանում հետագա աճի համար», - նշել է OPEC Հիմնադրամի նախագահ Աբդուլհամիդ Ալխալիֆան:

Հայէկոնոմբանկի Գործադիր տնօրեն Արտակ Առաքելյանն ասել է. «Մենք բարձր ենք գնահատում OPEC Հիմնադրամի շարունակական աջակցությունը Հայէկոնոմբանկին: Վիեննայում OPEC Fund 2026 Development Forum-ին մեր մասնակցությունից հետո հպարտ ենք տեսնել, որ ռազմավարական քննարկումները վերածվում են Հայաստանի համար շոշափելի տնտեսական արդյունքների: Այս միջոցները հնարավորություն կտան մեր ՄՓՄՁ հաճախորդներին ընդլայնվել եւ աճել՝ խթանելով Հայաստանի կայուն տնտեսական զարգացումը: Այս նշանակալից պայմանագիրը փաստում է Հայէկոնոմբանկի նկատմամբ OPEC Հիմնադրամի եւ Allianz Global Investors-ի վստահության մասին, եւ մենք ակնկալում ենք ամրապնդել այս ռազմավարական գործընկերությունը»:

Allianz Global Investors-ը ակտիվների կառավարման ոլորտի առաջատարներից է, որն ունի ավելի քան 700 ներդրումային մասնագետ աշխարհի 22 գրասենյակներում եւ կառավարում է 653 միլիարդ եվրոյի ակտիվներ:

OPEC Միջազգային զարգացման հիմնադրամի մասին

OPEC Միջազգային զարգացման հիմնադրամը (OPEC Fund) համաշխարհային մասշտաբով միակ լիազորված զարգացման հաստատությունն է, որը ֆինանսական միջոցներ է տրամադրում բացառապես անդամ երկրներից ոչ անդամ երկրներին: Այն հիմնադրվել է 1976 թվականին հստակ նպատակով՝ խթանել զարգացումը, ամրապնդել համայնքները եւ աջակցել մարդկանց ամբողջ աշխարհում: Մինչ օրս OPEC Հիմնադրամն ավելի քան 32 միլիարդ ԱՄՆ դոլար է հատկացրել ավելի քան 125 երկրներում զարգացման նախագծերի իրականացման համար:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԼԱՎԱԳՈՒՅՆ ՏԱՄՆՅԱԿ

Give Me Sport հեղինակավոր պորտալը հրապարակել է աշխարհի լավագույն կենտրոնական հարձակվողների իր նոր վարկանիշային աղյուսակը, գրում է armsport-ը:

Ցուցակի առաջին հորիզոնականում Մադրիդի «Ռեալի» եւ Ֆրանսիայի ազգային հավաքականի աստղ Կիլիան Մբապեն է: Երկրորդ տեղը զբաղեցրել է Մյունխենի «Բավարիայի» հարձակվող Հարի Քեյնը, իսկ լավագույն եռյակը եզրափակում է «Մանչեսթեր Սիթիի» ռմբարկու Էրլինգ Հալանդը:

Լավագույն տասնյակում հաջորդաբար տեղ են գտել նաեւ Ուսման Դեմբելեն (ՊՍԺ), Խուլիան Ալվարեսը («Ատլետիկո Մադրիդ»), Լաուտարո Մարտինեսը («Ինտեր»), Վիկտոր Օսիմհենը («Գալաթասարայ»), Ժոաո Պեդրոն («Չելսի»), Ալեքսանդր Իսակը («Լիվերպուլ») եւ Մարկուս Թյուրամը («Ինտեր»):

Հիշոցնենք, որ 2025/26 մրցաշրջանում Եվրոպայի ոսկե խաղակոշիկը՝ որպես մայրցամաքի լավագույն ռմբարկու, նվաճել է Մյունխենի «Բավարիայի» եւ Անգլիայի հավաքականի հարձակվող Հարի Քեյնը: Գերմանական Բունդեսլիգայի նախորդ խաղարկությունում նա դարձել է 36 գոլի հեղինակ՝ այս արդյունքին հասնելու համար անցկացնելով 31 հանդիպում

ՈՐԱԿԱԶԲԿՈՒՄ Է ՍՊԱՌՆՈՒՄ

Մադրիդյան դերբին սպասարկած գլխավոր մրցավար Միգել Անխել Օրտիս Արիասը կարող է հեռացվել պարտականությունների կատարումից առնվազն երկու խաղով: Այս մասին հաղորդում է The Touchline-ը, հայտնում է armsport-ը:

Հիշեցնենք, որ «Ատլետիկոյի» եւ «Ռեալի» միջեւ կայացած հանդիպումն ավարտվել էր «Ատլետիկոյի» հաղթանակով՝ 2-1 հաշվով:

Երկրորդ խաղակեսի սկզբում Օրտիս Արիասը Դին Հաուսենի՝ Ջուլիանո Սիմեոնեի նկատմամբ թույլ տված խախտման համար 11-մետրանոց էր նշանակել՝ սկզբում դեղին քարտ ցույց տալով «Ռեալի» պաշտպանին: Սակայն տեսակրկնությունների (VAR) համակարգի միջամտությունից հետո մրցավարը փոխեց իր որոշումն ու ուղիղ կարմիր քարտով հեռացրեց ֆուտբոլիստին խաղադաշտից:

Ընդ որում, դեռեւս առաջին խաղակեսում երկու վիճահարույց դրվագ էր գրանցվել նաեւ «Ատլետիկոյի» ֆուտբոլիստների մասնակցությամբ: Մասնավորապես, Քրիստիան Ռոմերոն Ջուդ Բելինգեմի նկատմամբ կանոնների խախտման համար պատժվել էր միայն դեղին քարտով, իսկ Լի Կան Ինը Ֆեդերիկո Վալվերդեի նկատմամբ խախտումից հետո ընդհանրապես խուսափել էր հեռացումից:

Նշենք, որ հանդիպման ավարտից հետո «Ռեալի» գլխավոր մարզիչ Ժոզե Մոուրինյուն բացահայտորեն իր դժգոհությունն էր հայտնել մրցավարական անձնակազմի աշխատանքից:

● Խամաճիկների պետական թատրոնում սեպտեմբերի 25-ին՝ ժամը 17:00-ին, կկայանա «Փոքրիկ իշխանը» ներկայացումը:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Հեսարրիր է իմանալ՝ լիցենզիա եւ համապատասխան ներդիր ստանալու համար ինչ փաստաթղթեր են անհրաժեշտ:

Միսակ Կարապետյան, 48 տարեկան



ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքաշինության բնագավառի լիցենզիա եւ համապատասխան ներդիր ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանված է «Քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ու որակավորման կարգը հաստատելու մասին» N 2106-Ն որոշման 1-ին հավելվածի 10-րդ կետով (http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=186529):

Հարկ է նշել, որ urban.e-gov.am էլեկտրոնային հարթակը, համակցված լինելով տեղեկատվական այլ բազաների հետ, հնարավորություն է տալիս ինքնաշխատ եղանակով արտացոլել եւ ստուգել մի շարք տվյալներ:

Որպես փաստաթուղթ կցվում են՝

կազմակերպության կողմից կատարված առնվազն 1 աշխատանքի կամ ծառայության վերաբերյալ ընդունող հանձնաժողովի արձանագրության կամ ավարտական ակտի կամ ծածկված աշխատանքների ակտերի կամ կատարողական ակտերի եւ իրավահաստատող այլ փաստաթղթերի բնօրինակների սքանավորված տարբերակները,

ոլորտից կախված՝նաեւ մեքենաների, մեխանիզմների եւ տեխնիկական միջոցների, սարքավորումների սեփականության կամ օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթեր (տեխնիկական անձնագրի, վարձակալության պայմանագրի, սեփականության վկայականի եւ այլ հիմնավորող փաստաթղթերի պատճեններ), շենքերի եւ շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացություն եւ լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ, նյութեր:

ՀՀ քաղաքաշինության կոմիտե

Էջը՝ ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Հնարավոր է արդյոք սովորողին մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները տրամադրել ոչ թե ուսումնական հաստատությունում, այլ տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնում (ՏՄԱԿ):

Կարեն Օհանյան, 52 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե սովորողին տրամադրվող ծառայությունը պահանջում է համապատասխան հարմարեցված տարածք, սարքավորումներ եւ գույք, ապա տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնը կարող է, ծնողի համաձայնությամբ, Անհատական ուսուցման պլանով նախատեսված աջակցող ծառայությունները սովորողին տրամադրել ՏՄԱԿ-ում: Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնում ծառայությունների տրամադրումը երեխային իրականացվում է անվճար, ՏՄԱԿ-ի միջոցներով, դասերից հետո, ըստ նախատեսված տեւողության եւ ծավալի:

Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի



Սարի թաղում մոտ 220 տան բնակիչներ 15 օր է՝ ապրում են ահը սրտներում. հսկայական փոսի պատճառով անգամ աղբատար ավտոմեքենան է կողաշրջվել:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	+ 6 + 11 + 23 + 28
	Կոտայքի լեռներ	+ 7 + 11 + 23 + 27
	Կոտայքի նախալեռներ	+ 14 + 16 + 29 + 31
	Գեղարքունիք	+ 7 + 12 + 21 + 26
	Լոռի	+ 8 + 13 + 23 + 27
	Տավուշ	+ 10 + 13 + 24 + 27
	Արագածոտնի լեռներ	+ 6 + 10 + 23 + 26
	Արագածոտնի նախալեռներ	+ 14 + 18 + 28 + 32

	Արարատ	+ 14 + 18 + 29 + 33
	Արմավիր	+ 12 + 17 + 31 + 34
	Վայոց ձորի լեռներ	+ 7 + 11 + 25 + 28
	Վայոց ձորի նախալեռներ	+ 13 + 17 + 31 + 34
	Սյունիքի լեռներ	+ 7 + 10 + 22 + 25
	Սյունիքի նախալեռներ	+ 9 + 13 + 26 + 30
	Սյունիքի հովիտներ	+ 16 + 20 + 32 + 35
	Երեւան	+ 16 + 18 + 32 + 34

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **22.09.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*